ՀԱՅԿԱԶՈՒՆ ԱԼՎՐՑՅԱՆ. Համշենը եւ համշենահայությունը. արդի հիմնախնդիրները, *Երեւան, “Էդիթ պրինտ” հրատ., 2016, 152 էջ:*

Համշենի և համշենահայերի թեման նախկինում ժամանակ առ ժամանակ գրավել է աշխարհասփյուռ հայության ուշադրությունը: Այսպես, դեռ 1915 թ. մարտի 18-ին Բուլղարիայի Սոֆիա քաղաքում հրատարակվող “Հայաստան” պարբերականը, անդրադառնալով համշենահայերի խնդրին, “Մահմետական հայերը Խօպի շրջանին մէջ” վերնագրով նյութում, գրում էր. “…Բաթումի, Արդուինի եւ Կարինի ազգաբնակութիւնը գիտէ, որ հիւսիս արեւմտեան Հայաստանի ծայրամասերուն՝ Լազիստանի սարերուն մէջ եւ Սեւ ծովի եզերքներէն քիչ հեռու կապրին կիսաթափառաշրջիկ համշէնցիները, թուով 30000:

Շատ քիչ ուսումնասիրուած է անոնց արդիական կենցաղը, միայն պատահական ճամփորդներ եւ աշխատելու համար համշէնցիներու գիւղերը գնացող հայ արհեստաւորները կը բերեն տեղեկութիւններ այդ ազգաբնակութեան մասին:

Մինչեւ վերջին ժամանակներս մի քանի ընտանիքներ, դարձեալ համշէնցի, պահեր են իրենց կրօնը՝ քրիստոնէութիւնը: Իսկ ազգաբնակութեան մնացած մասը մահմէտականացած է:

Համշէնցիները գաղթականներ են. ամէն հաւանականութեամբ Անիէն եկած: Մնալով մինակ Աճառայի մահմէտականներուն մէջ, գոյութեան կռիւը հարկադրած է զիրենք ընդունիլ իսլամութիւնը:

Այդ բրօցեսը շարունակուել է մինչեւ 1828 թուականի ռուս-թրքական պատերազմը, որմէ ետք աւելի մեծ թափով առաջ գնացեր է, երբ կատարուեր է 19-րդ - դարու մեր մեծ գաղթը Կարինի հիւսիս-արեւելեան մասէն՝ Կարապետ եպիսկոպոսի առաջնորդութեամբ: Կարնոյ դաշտի հիւսիս-արեւելեան կողմը՝ Եփրատի ափունքներուն մօտերը փռուած են այսօր իսկ բազմաթիւ իսլամացած հայ գիւղեր: Այդ երբեմնի հայ գիւղերէն մնացած են վաղեմի գերեզմանները՝ խաչքարերով եւ տոհմանունները–այսպէս Մարգար օղլու Հասան, Թովմաս օղլու Ահմէտ եւ այլն: Կան գիւղեր, որոնց կէսը պահած է քրիստոնէութիւնը, օրինակ՝ Գըզըլ-

քիլիսէն: Շատ անգամ միեւնոյն տոհմի երկու կանագոփներէն (հօրեղբօր թոռները) ոմանք մահմետական են եւ ոմանք քրիստոնեայ:

Իսկ քանի դէպի հիւսիս-արեւմուտք յառաջանանք, իսլամացման երեւոյթը աւելի կը զարգանայ, իսկ Համշէնը ամբողջովին մահմէտականացած է. իսկ անոնք որ ուզեր են պահել քրիստոնէութիւնը՝ գաղթեր են Սօխումի շրջանները:

Իսլամացումը սակայն չէ փոխեր այդ ազգաբնակութեան հայրենի դարաւոր աւանդութիւնները: Գիտեն հայերէն, ընտանեկան ներքին սովորութիւնները մնացեր են հայկական, խմորը խաչակնքելու սովորութիւնը, քրիստոնէական երդումները, սուրբերու տօները, ուխտատեղիները այցելել եւ այլ հաւատալիքներ մնացեր են անվթար:

Շատ հեռու չեն փախչիր հայերէն. առանց մեծ կրօնամոլութեան՝ կը խոստովանին, որ իրենց պապերը եղեր են հայ-քրիստոնեաներ, բացառութիւն կը կազմեն Եփրատի ափունքներուն շուրջ ապրողներն, որոնք շատ կծու մահմետականներ են եւ կարդարացնեն ժողովրդական խօսքը՝ որ "գինուց դարձած քացախը խիստ կը լինի":

Անոնց քաղաքակրթական հակումները եւ ոչ-յարձակողական խառնուածքը ինքնին ապացոյցներ են, որ բոլորովին ուրիշ ժառանգականութիւն կը կրեն":

Սակայն վերջին տասնամյակներին Համշենի առեղծվածը սկսել է ավելի շատ հետաքրքրել համայն հայությանը. ովքե՞ր են համշենահայերը, ինչպե՞ս են հենց իրենք սահմանում համշենական ինքնությունը, ի՞նչ առանձնահատկություններ և ինչպիսի՞ աղերսներ ունի համշենական մշակույթը հայկականի հետ: Հայկական մշակույթի ո՞ր շերտն է պահպանվել համշենական մշակույթում:

Չնայած նախորդիվ կատարված գիտական աշխատանքներին՝ այնուամենայնիվ, համշենահայերի որոշ հիմնախնդիրներ դեռ կարոտ են ուսումնասիրության: Նկատի առնելով Սփյուռքի և Հայաստանի հայությանը խիստ հետաքրքրող սույն թեմայի բազմաբովանդակությունը՝ 2016 թ. վերջերին ՀՀ սփյուռքի նախարարության հովանավորությամբ Երևանում լույս տեսավ "Արևմտահայոց հարցերի ուսումնասիրության կենտրոն" գիտահետազոտական հիմնադրամի տնօրեն, հայագետ, բ. գ. թ. Հայկազուն Ալվրցյանի "Համշենը և համշենահայությունը. արդի հիմնախնդիրները" գիրքը:

Աշխատության մեջ ներկայացվում են Համշենի և համշենահայության համառոտ պատմությունը և արդի հիմնախնդիրները, որոնք կարող են հետաքրքրել ինչպես մասնագետներին, այնպես էլ՝ ընթերցող հանրությանը: Գիրքը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից (իրենց հերթին բաժանված են ենթագլուխների), և վերջաբանից:

Ինչպես ներածության մեջ իրավամբ նկատում է հեղինակը, "Ազգային պետականության բացակայության պայմաններում ինքնության հիմնական ցուցիչ հա-

մարվող կրոնից, դավանանքից և եկեղեցուց բռնի հեռացումը դարերի ընթացքում ավերիչ հետևանքներ ունեցավ հայ ժողովրդի այս հատվածի վրա: Իսլամացված հատվածը ոչ միայն հեռացավ իր եկեղեցուց, այլև աստիճանաբար կորցրեց լեզուն, մշակույթի, սովորույթների և ավանդույթների հիմնական մասը" (էջ 3):

"Համշենի իշխանության ձևավորումն ու վերելքը" վերնագիրը կրող առաջին գլխում հեղինակն անդրադառնում է նախքան VIII դարը Պոնտոսում հայերի առկայության, 8-րդ հարյուրամյակում Հայաստանից դեպի Պոնտոս հայերի մեծ արտագաղթի, Բյուզանդական կայսրության կազմում Համշենի իշխանության ստեղծման, IX–X դարերում Բագրատունիների թագավորության, իսկ XIII–XV - դարերում Տրապիզոնի կայսրության կազմում Համշենի իշխանության գոյատևման և հետագայում Համշենի իշխանության անկման պատմությանը:

"Օսմանյան կայսրության իսլամացման քաղաքականությունն ու Համշենի պայքարը ինքնության պահպանման համար 15–19-րդ դարերում" վերնագրով երկրորդ գլխում Հ. Ալվրցյանը Համշենի հայության իսլամացման պատմությունը բաժանում է հետևյալ 4 հիմնական փուլերի. առաջին փուլ՝ XVI դարի վերջեր – 1722 թ., երկրորդ փուլ՝ 1722–1838 թթ., երրորդ փուլ՝ 1838 թ. մինչև 1915 թ. Հայոց ցեղասպանությունը, չորրորդ փուլ՝ 1915–1930-ական թվականներ:

Հեղինակը նաև առանձին գլխով անդրադառնում է Մեծ եղեռնի տարիներին Համշենի հայության վիճակին: "Հայոց ցեղասպանությունը և համշենահայերը" վերնագրված երրորդ գլխում նրա կողմից անդրադարձ է կատարվում 1915–1923 թթ. համշենահայության զինված պայքարին: Այս գլխում զետեղված է նաև Տրապիզոնի հայերի կոտորածների վերաբերյալ օսմանյան երկու կարևոր փաստաթուղթ: Սույն վավերագրերից մեկը Կոստանդնուպոլսի ռազմական արտակարգ ատյանում 1919 թ. մարտի 26-ից մայիսի 20-ն իրականացված Տրապիզոնի տեղահանության ու կոտորածների դատավարության ամբաստանագիրն է, իսկ մյուսը՝ նույն դատաքննության արդյունքում կայացված դատավճիռը:

"Համշենահայերի համայնքների ձևավորումը Ռուսական կայսրությունում և նրանց հետագա վիճակը ԽՍՀՄ-ում" վերնագրով չորրորդ գլխում Հ. Ալվրցյանը մանրամասն ներկայացնում է XIX դարում քրիստոնյա համշենահայերի մի մասի՝ դեպի Ռուսական կայսրություն կատարած գաղթը, Ռուսաստանում ու Աբխազիայում առաջացած համշենահայ համայնքների կրթական, մշակութային և եկեղեցական կյանքը: Հատուկ անդրադարձ է կատարվում նաև Ռուսաստանում և Աբխազիայում հայության զանգվածային լրատվամիջոցներին:

Վերջին՝ հինգերորդ գլխում, որը կրում է "Տեղեկություններ կրոնափոխ համշենցիների վերաբերյալ" վերնագիրը, հեղինակն անդրադառնում է ներկայիս Թուրքիայի Հանրապետության տարածքում ապրող իսլամացած համշենահայե-

րի կամ հեմշիլների բնակության վայրերին և ենթախմբերին, կրոնափոխ համշենահայերի թվին ու ներկայիս դրությանը, վերլուծում է կրոնափոխ համշենցիների ինքնության խնդիրը և ներկայացնում թուրքական պաշտոնական պատմագրության կողմից համշենահայերի պատմությունը խեղաթյուրելու փորձերը:

"Վերջաբանի փոխարեն" վերնագրված ամփոփման մեջ հեղինակը ներկայացնում է "Ակօս" շաբաթաթերթում լույս տեսած կրոնափոխ համշենահայերի մասին երկու օսմանյան պաշտոնական փաստաթուղթ, որոնցում արձանագրվում է համշենցիների հայկական ծագումը:

Կրոնափոխ համշենցիներին առնչվող ամենաարդիական խնդիրը, թերևս, ինքնության հարցն է, որի վերաբերյալ Հ. Ալվրցյանը նշում է. "Համշենցիների մեջ այս հարցում գոյություն ունի երեք հիմնական մոտեցում" և հանգամանորեն շարադրում է այդ տեսակետները:

Հարկ է արձանագրել, որ Թուրքիայի համշենահայերը սեփական մշակույթի և լեզվի հանդեպ մշակել են մի ուրույն մոտեցում, համաձայն որի՝ իրենց ընկալում են ոչ թե հայ կամ մեկ այլ ժողովրդի ներկայացուցիչ, այլ՝ ուղղակի համշենցի, իսկ իրենց մշակույթն էլ՝ համշենական: Եթե մի կողմ թողնենք հավատքի հարցը, ապա կարող ենք եզրակացնել, որ նրանց պարագայում ինքնությանը վերադառնալու խնդիր, որպես այդպիսին, գոնե իրենց համար գոյություն չունի, քանի որ իրենք իրենց ընկալում են որպես համշենցի: Այս առումով ուշագրավ է Հ. Ալվրցյանի տեսակետը. "Իսլամացած համշենահայերն իրենց կոչում են հեմշիլ (համշենցի). նրանց այսպես են կոչում նաև թուրքերն ու մյուս ժողովուրդները: Սա խիստ հետաքրքիր փաստ է. կորցնելով հավատը, մեծ մասը՝ նաև լեզուն, նրանք չկորցրին իրենց ինքնության գիտակցությունը, չթրքացան եւ թուրքերին էլ պարտադրեցին իրենց կոչել այլ կերպ՝ իրենց հայրենիքի անունով":*

Այսպիսով, Հ. Ալվրցյանի "Համշենը եւ համշենահայությունը. արդի հիմնախնդիրները" գիրքը էական ներդրում է համշենագիտության ոլորտում: Կարծում ենք, որ կարևոր է սույն աշխատությունը թարգմանել այլ լեզուներով, հատկապես՝ թուրքերեն, ռուսերեն և անգլերեն:

ՄԵԼԻՆԵ ԱՆՈՒՄՅԱՆ

---

* *Հ. Ալվրցյան. Կրոնափոխ հայերի խնդիրները Թուրքիայի Հանրապետությունում, Երևան, 2014, էջ 106–107:*